446. **ՊՈՒՔՐԷՇ** (Bucarest, Ռումանիա) այս տարի Յուլիսէն սկսալ հրատարակուիլ **Ճեփոր** պատկ. ամսաթերթը ԺԱՆ ՍԱՊԸԹԵՅ (Mosilor, 53)ի տպարանէն: Լէօ կը գրէ. «Մենք ունենք և մի քանի գրքեր որոնց վրայ տպագրութեան տեղը նշանակուած է ԵԱՇ քաղաքը»:

447 ... 449. **ՎԱՌՆԱ** (Պուլկարիա), 1896ի հայ գաղթականութեան հոսանքէն առաջ, տպարան ունեցած է † ԵՕԱՆԷՍՔՈՒ Ռումանահայը՝ որուն խօսքն էր լատին տառերով տարածել հայերէն լեզուն: Այդ առաջադրութեամբ 1883ին հրատարակած է Araçin ganonk kahakavarouthian (տպ. Կ. Պոլիս, Գ. Զարդարեան), Himaranotzi misternére (տպ. Կ. Պոլիս, Արամեան), քերական մը. իսկ Վառնայի մէջ Huïs (Յոյս) շաբաթաթերթը (1885-6): Այս արտառոց դրութիւնը ընդունելութիւն չգտներ, և իր սեպհ. տպարանը (որ քաղքին ազգ. վարժարանը կը գտնուէր), կը նուիրէ Վառնայի երիտասարդութեան որ կ'սկսի հրատարակել **Իրաւունք** անուն 4 էջնոց շաբաթաթերթ մը, կէսը՝ տաճկեմար-հայատառ: «Իրաւունք», գաղթականութենէն յետոյ, զուտ հայաթերթի վերածուելով՝ լոյս ընծայուած է Պլկր. Մամուլով՝ Պունճուքճեանի և Յ. Գուրպէթեանի կողմէ: Դպրոցը 1896ին այրելով, կը փճանայ նաև Վառնայի այդ անդրանիկ հայ տպարանը: Նոյն տարին է որ վրայ կը հասնին հայկական ջարդերը, մինչ Պոլսահայք՝ մեծամասնութեամբ միջակ դասակարգէ՝ կաշ կարասի են. ծախելով կը խուժեն Վառնա, Տաճկաստանի անապահով վիճակէն խեղակորոյս: ** Արտագաղթի այդ վիփխարի գրոհին մէջ կը գտնուէր նաև իր ընտանիքով ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ [140Բ թուահամար] որ հոն հասնելուն վաղորդայնին իսկ, զաւկին՝ ԳԱՐԵԳԻՆի հետ կը հիմնէ ԱՐԵՒԵԼԵԱՆ անուամբ տպարան մը, հետը մէկտեղ փոխադրած կազմածքով: Վառնայի մէջ Կիւբէմպէրկեան իր բեղուն գործունէութիւնը տե՛ս 140Ա թուահամար, Կ. Պոլիս (Թուրքիոյ բաժին): ** ՏԻՐԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ [**437**Բ թուահամար]. Պոլիս **Հենչակ** զաւեշտաթերթին ու զանազան զուարճալի գրքոյկներու հրատարակիչն է այս անձը որ Վառնա հաստատուելուն՝ իր տառամանուկը կ'ունենայ և կ'սկսի գործի: Բաց ի Օ. Բարսեղեանէ, ինք և ուրիշներ այդ տարիներուն՝ իրենց չարածները կը դրոշմեին Վօյնիքօֆ, Վզայմնօսր (1), Տ. Թօտորօֆ (2) և Գնչօ Նիքօլօֆ (3) պլկր. տպարանները, մամուլ չունենալնուն: Փափազեան լոյս ընծայած է **Հայելի** շաբաթօրեայ երգիծաթերթը (12 Ապր. 1897 - 6 Մարտ 1899, հարիւր թիւ) զոր պահ մը շարունակած է Աղէքսանդրիոյ մէջ [տե՛ս զինքն անդ, **437** թուահամարով]: Այս թերթէն զատ, հոն լոյս ընծայուած գիրքերը եղած են Փիլիկ աղբօր հարսնիքը, Թապլաքեար վարժապետը, Խարուած Ակնցին, Գուշակ ապագայի (ընտ. բախտացոյց), Կաղանդչէք կամ գրչի գրօսանք (Վ. Քիւչիւքեանի), Էրքեին ֆենոի՝ քաբըլը եենոի. Մահճուպիէին Միւքեաֆաթը, Գրպանի զօճա, և Միհրան Զգօնեանի ոտանաւորները: ** ՄԻՔԱՅԵԼ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ [**182**Բ թուահամար] 1905ին տպած է **Կաղանդչէք**: Սահմ. հռչակումին, փոխադրուած է Պոլիս ուր անցողակի յիշած ենք զինք **182** թուահամարով, Travaux de Villeի խմբումին մէջ: ** ՏՊ. "ԻՐԱՒՈՒՆՔ", ԼՐԱԳՐՈՅ (1896 - 1912), տէր և տնօրէն՝ Յ. Գուրպէթեան որ հրատարակած է նաև Երկու սէր (1897), Նոր երգարան կամ մրմունջ (1901), Դիապարտը (1902), Կարիպ ախպէր, Ազատ երգարան (1908), **Կարմիր ժամուց** (Ս. Արփիար) (1909), Անդրանիկ (1911), Գուրան (1912) են.: ** ՄԱՏԹԷՈՍ ԼՕՊԱՍԵԱՆ (տպ. «Ոսկեղար»): Սահմ. հռչակումէն վերջ Վառնա ցարդ գործող հայու տպարաններէն Բ.ն է այս, «Իրաւունք»էն վերջ:

450 - 453. **ՌՈՒՍՃՈՒՔ** (Պուլկարիա) Ա. անգամ կը տպուի **Դանուբ** շաբաթաթերթը 1892ին, ապա **Զիբենի** և **Հայաթերթ** (Տ. Ճգնաւորեանի հրատարակածը զոր դրոշմած է Գ. Մազմանեան): ** ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.ԵԱՆ տպարանէն 1897ին լոյս կ'ընծայուի Մարդու մը պատմութիւնը: ** ԳԱՌՆԻԿ Գ. ՄԱԶՄԱՆԵԱՆ. բնիկ Կիրասոնցի. արհեստը սորված Օ. Բարսեղեանէ: Տպած է կարգ մը **Տեղեկագիր**ներ (1902), Ընկերվարականաց պրակներ, **Նորավէպներ** (Արգոմ Սիմոն = Կրպտ. Ռուբէն), Հայ Սօցիալ-Դէմօկրատութիւնը (1903), Կրթ. ծրագիր (1904), Թուրքիոյ ընդդիմադիր տարրերը (1908): Յետոյ տպարանը գոցած՝ Պոլիս եկած է, իր երեսփ. թեկնածութիւնը դնելու Կիրասոնի համար: ** "ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ"ի տպածները 1904ին. — Կեանքի դիմաց, Ազգերի մայիսեան տօնը, Միլիտարիզմը և բանուոր դասակարգը, Դարբնեւոր, 10 էջ, (Լեռնենց = Աւետիս Նազարբէգ):

---

(1) Տպագրած է **Հովասուն** (1899), Արշալուսոր (1901), **Արմաղան** (1909), ևն. ևն.: (2) Տպագրած է **Մուհամմէդ** (1904): (3) Տպագրած է **Նոր Ընթերցարան** (ճեր) 1899-1900, **Դուրան** (1910) Բ. տիպ: